**ՎԱՆՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՊԱՏՄԱԲԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ԱՆԿԱԽ ՓՈՐՁԱԳԵՏ**

Հեռ. +374 98-23-29-21
Էլ. փոստ vano_karapetyan_1992@mail.ru
«16» «04» 2024թ.

ՀՀ Լոռու մարզպետ պարոն Արամ
Ղազարյանին

Հարգելի՛ պարոն Ա. Ղազարյան.

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով, խնդրում եմ ինձ տրամադրել պահանջվող տեղեկատվությունը՝ կից (Microsoft Excel) ձևաչափով:

Հարգանքով՝ **Վանո Կարապետյան**

«Ուղղակի ժողովրդավարություն» ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման ՀԿ
Հասցե. Լոռու մարզ. ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 47/13-1
Հեռ. (+374)(77) 34-37-45

"Direct democracy" NGO for consolidation democratic institutions NGO
Address: Lori Region, Vanadzor Tigran Mec 47/13-1
Tel. (+374) (77) 34-37-45

ՀՀ Լոռու մարզպետ Ա. Ղազարյանին

Հարգելի պարոն Ղազարյան,

Վանաձոր համայնքը 2024 թվականի դեկտեմբերի 27-ին հայտարարել է մի շարք մրցույթներ համայանքային թափուր պաշտոնները համալրելու վերաբերյալ (հղումը՝ https://cmis.vanadzor.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=264&fbclid=IwAR2zlcsoJbyiie8NGaFbS9UTR6qfifTz48Cs_fpwMfx6hzBEWvc5p2GykQM):

Մրցույթների հայտարարությունների վերևի մասում՝ տեսանելի ձևով, նշված է, որ վերջնաժամկետը մարտի 28-ն է: Ի հակառակ սովորաբար հայտարարվող մրցույթների՝ փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի օրը նշված չէ տեքստի սկզբում, այլ գրված է տեքստի միջնամասում՝ մարտի 13:

Ավելին՝ մրցույթներին մասնակցելու մտադրություն ունեցող որոշ քաղաքացիներ ահազանգել են, որ փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ մարտի 13-ը, ի սկզբանե առկա չի եղել մրցույթի հայտարարության մեջ, այլ ավելացվել է հենց մարտի 13-ին:

Քաղաքացիները ահազանգել են նաև, որ Վանաձոր համայնքի աշխատակազմը արհեստական խոչընդոտներ է ստեղծել հայտարարված մրցույթների դիմողների համար, օրինակ՝ մեկ տեղեկանքով աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկությունները չեն ընդունվել, այլ պահանջվել են յուրաքանչյուր աշխատավայրից առանձին տեղեկանքներ:

Տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 29.08.2006թ. N 12-ն «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը հաստատելու մասին» հրամանի 8.1 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովում որպես համայնքապետարանի ներկայացուցիչ կարող են ընդգրկվել՝ համայնքի ղեկավար, տեղակալ, խորհրդական, աշխատակազմի համայնքային ծառայողներ:

Այսպիսով՝ հայտարարված մրցույթների վերաբերյալ առկա է 2 խնդիր՝ առաջինն այն է, որ փաստաթղթերի ընդունման փուլում դիմողների համար արհեստական խոչընդոտներ են ստեղծվել, երկրորդը՝ մրցուէթային հանձնաժողովում պետք է ներառվել համայնքի ղեկավարը, խորհրդականը, աշխատակազմի համայնքային ծառայողներ, մինչդեռ այս պահին նշված բոլոր

պաշտոնները զբաղեցնում են ժամանակով պաշտոնակատարներ, ովքեր իրավասու չեն ընգրվել հանձնաժողովներում։

Հաշվի առնելով վերը նշված խնդիրները՝ խնդրում եմ պարզաբանել, թե արդո՞ք Լոռու մարզպետարանի ներկայացուցիչները ընդգրկվելու են մրցութային հանձնաժողովներում, արդյո՞ք Մարզպետարանը իրավաչափ է գնահատում մրցույթների հայտարարման գործընթացը, արդյո՞ք քննարկվելու է մրցութային հանձնաժողովի կազմի իրավաչափությունն ու հետևաբար նաև՝ հանձնաժողովի իրավազորությունը։

Ծանուցում. սույն գրությունը հիմնված է ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով ամրագրված տեղեկություններ ստանալու իրավունքի վրա, իսկ պատասխանն ակնկալվում է ստանալ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով սահմանված 5-օրյա ժամկետում։

Հարգանքով,
«Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ
նախագահ՝ Գևորգ Քոթանջյան
14.03.2024թ.